

ՄԱՐՏ 2022

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ





1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	4
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	5
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում	7
1.3. Ջրահեռացման համակարգ	8
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	9
1.5. Էներգահամակարգ	9
1.6. Մեքենա-մեխանիզմներ	10
2. Առևտրային տնօրինություն	11
2.1. Բաժանորդների տվյալներ	12
2.2. Հասույթ	12
2.3. Գանձում	13
2.4. Դեֆիտորական պարտքեր /Իրավաբանական վարչություն/	14
2.5. Ջրաչափեր	15
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	16
3. Տեխնիկական տնօրինություն	17
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	18
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	19
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	22
3.4. Ջրատար համակարգի բարելավում	22
3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն	26
3.6. 1-85 թեժ գիծ	27
4. Լրատվական ծառայություն	28
5. Որակի, առողջության և անվտանգության բաժին	31
5.1. Փաստաթղթերի մշակում	32
5.2. Համագործակցություն ՀՀ ԱԲՆ-ի, Երևանի քաղաքապետարանի, մարզպետարանների և տիմերի հետ	32
5.3. Դասընթացներ/սեմինարներ	33
5.4. Բուժզննում	33
5.5. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում	34

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Քաղաք Երևան, Էրեբունի վարչական շրջան

Հաշվետու ժամանակահատվածում «Հարավ» ՇՏ սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարաորոնողական և ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես

Քաղաք Երևան

● «Կենտրոն» տեղամաս

Կորի փողոցում գտնվող անհատական տնատիրությունները ջուրը ստանում էին $d=32-100$ մմ վթարված, քայքայված պողպատե խողովակներով, որոնց որոշ հատվածներ անցնում էին տների և հողատարածքների տակով, առկա էին ջրակորուստներ, ջրի ճնշումը չէր բավարարում կանոնավոր ջրամատակարարում ապահովելու համար:

Հարցի կարգավորման համար «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից կառուցվել է $d=50$ մմ $L=200$ զծ/մ երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով ջրագիծ: Հայտնաբերվել և խցափակվել են ապօրինի միացումներ, կատարվել են $d=20$ մմ $L=80$ զծ/մ ընդհանուր երկարությամբ

անհատական միացումներ

նոր կառուցված ջրագծից:

Տարածքից դուրս

տեղադրվել է թվով 15

ջրաչափական դիտահոր

և թվով 19 ջրաչափ

փականային հանգույց-

ներով: Արդյունքում՝ ջրի

ճնշումը կարգավորվել է,

ջրամատակարարումը՝

կանոնավորվել:



Մարզ Արարատ

● Նոր Կյուրիին համայնքի թվով 145 բնակիչ-բաժանորդի ջրամատակարարումը իրականացվում է Նուբարաշեն-Նոր Խարբերդ $d=100$ մմ ջրատարից, որը կառուցվել էր



1970-ական թվականներին և գտնվում էր քայքայված վիճակում: «Արտաշատ» տեղամասի աշխատակիցների կողմից քայքայված ջրագիծը փոխարինվել է $d=110$ մմ $L=1300$ զծ/մ պոլիէթիլենային խողովակներով, ինչի արդյունքում բարելավվել է համայնքի ջրամատակարարումը և ջրի որակը, վերացել են գաղտնի վթարները և խնայվել է մոտ 3լ/վրկ ջրաքանակ:



Ջրաչափերի տեղադրում, փոխարինում և/կամ տեղափոխում

Հաշվետու ժամանակահատվածում «Հարավ» ՇՏ տարբեր ստորաբաժանումների կողմից տեղադրվել և փոխարինվել են 15-65մ տարբեր տրամագծերի թվով 371 ջրաչափեր:

Քաղաք Երևան

● Նորքի 5 փողոց 67 հասցեում վթարային վիճակում գտնվող $d=300$ մմ մետաղական կոյուղագիծը վերակառուցվել է «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից: Վթարված $L=12$ գծ/մ երկարությամբ խողովակը փոխարինվել է նոր $d=300$ մմ պոլիէթիլենային երկշերտ ծալքավոր խողովակով, վերանորոգվել է թվով 1 դիտահոր: Արդյունքում վերոնշյալ փողոցի ջրահեռացման համակարգը գործում է անխափան:



● Ավան թաղամաս, Դուրյան փ. 28 հասցեում վթարային վիճակում գտնվող $d=200$ մմ թուջե կոյուղագիծը վերակառուցվել է «Հյուսիս» տեղամասի աշխատակիցների կողմից: Վթարված $L=42$ գծ/մ երկարությամբ խողովակը փոխարինվել է նոր $d=200$ մմ պոլիէթիլենային երկշերտ ծալքավոր խողովակով:

● Ֆրունզեի փողոց 6/5-6/6 հասցեներում $d=300$ մմ, $L=63$ գծ/մ երկարությամբ կոտրված կերամիկական կոյուղագիծը «Հարավ» տեղամասի աշխատակիցների կողմից փոխարինվել է շրջանցիկ $d=300$ մմ $L=54$ գծ/մ երկարությամբ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակներով, կառուցվել է թվով 2 D-1000, H-1000 նոր դիտահոր:



Սյունիքի մարզ, քաղաք Կապան

«Կապան» տեղամասի աշխատակիցների կողմից իրականացվել են կոյուղագծերի փոխարինման աշխատանքներ

Մ.Ստեփանյան փողոց 13 հասցեում կառուցվել է $D=200$ մմ $L=26$ գծ/մ երկարությամբ պոլիէթիլենային երկշերտ ծալքավոր խողովակաշար:

Շահումյան փողոցի 25 հասցեում կառուցվել է $D=200$ մմ $L=18$ գծ/մ երկարությամբ պոլիէթիլենային երկշերտ ծալքավոր խողովակաշար:

Թումանյան փողոցի 16 հասցեում կառուցվել է $D=200$ մմ $L=22$ գծ/մ երկարությամբ պոլիէթիլենային երկշերտ ծալքավոր խողովակաշար:



Մարտ ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	2003.0
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	67449.0
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	58229.0
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	13874.0
Ջրաչափական հանգույններ ուսուճաստիություն, սխեմաների կազմում	հատ	536.0
Շահագործումից հանված ջրագիծ	մ	757.5
Կառուցված ջրագիծ	մ	3615.2
Կառուցված կոյուղագիծ	մ	234.0
Վերացված գաղտնի վթարներ	հատ	20
Փոխարինված փական	հատ	54
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույն	հատ	333
Մաքրված դիտահոր	հատ	626
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	11.4
<i>Վերացված վթարներ</i>	<i>Չափման միավոր</i>	<i>Քանակ</i>
Ջրամատակարարման ցանցում	հատ	885
Ջրահեռացման ցանցում	հատ	1899
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	0

Մարտ ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	657	918	455

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է մարտ ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									
	15	20	25	32	40	50	65	80	100	Ընդամենը
Տեղադրված	263	11	0	0	0	0	0	0	0	548
Փոխարինված	201	21	5	2	2	3	0	1	0	235
Տեղափոխված	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տեխ. ակտ	177	9	2	3	2	0	1	0	0	194
Ընդամենը	641	41	7	5	4	3	1	1	0	977

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 977 ջրաչափ: Կատարված աշխատանքների 66 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մարտ ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	1420	212	0
2	Մաշտոց	1350	185	0
3	Շահումյան	1390	179	34
4	Զեյթուն	430	209	0
5	Շիրակ	415	421	4
6	Արթիկ	0	77	0
7	Ապարան	0	27	0
8	Ալավերդի	1410	23	0
9	Աշոցք	0	2	0
10	Բերդ	0	11	0
11	Իջևան	60	28	0
12	Լոռի	2570	139	0
13	Նոյեմբերյան	0	14	0
14	Սպիտակ	0	13	0
15	Ստեփանավան	525	19	0
16	Թալին	0	10	0
17	Տաշիր	90	3	0
18	Չարենցավան	580	68	0
19	Աբովյան	2435	83	0
20	Հրազդան	740	97	6
21	Կենտրոն	150	225	24
22	Հյուսիս	0	190	42
23	Հարավ	0	324	60
24	Էրեբունի	0	140	18
25	Արմավիր	0	129	3
26	Արտաշատ	0	77	4
27	Էջմիածին	0	162	9
28	Աշտարակ	0	35	0
29	Արարատ	0	75	0
30	Մասիս	0	56	0
31	Գավառ	640	33	2
32	Սևան	360	69	0
33	Մարտունի	0	26	0
34	Վարդենիս	0	11	0
35	Ճամբարակ	0	16	0
36	Դիլիջան	0	48	0
37	Վայք	120	21	0
38	Եղեգնաձոր	555	17	0
39	Ջերմուկ	0	42	0
40	Սիսիան	350	45	0
41	Գորիս	0	45	0
42	Կապան	1100	72	26
43	Մեղրի	0	28	0
	Ընդամենը	16690	3706	232

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Սևանի N5 կեղտաջրերի պոմպակայանի ենթակայանի բարձր լարման մալուխը զննվել էր, որի պատճառով զննվել էին նաև ապահովիչները: Արդյունքում վերանորոգվեց զննված մալուխը և փոխարինվեցին բարձր լարման ապահովիչները: Հաշվետու ամսում այրվել էր նաև պոմպի թողարկիչը, որը փոխարինվեց նորով և այժմ պոմպակայանը աշխատում է բնականոն ընթացքով:

- Դիլիջանի կեղտաջրերի մաքրման կայանում շարքից դուրս էր եկել օդամուղի առանցքակալը, որը փոխարինվեց նորով և այժմ աշխատում է անխափան:

- Վարդենիսի կեղտաջրերի պոմպակայանի պոմպի աշխատանքը խափանվել էր, որի պատճառն էր դարձել առանցքակալի շարքից դուրս գալը, որն էլ փոխարինվեց նորով և այժմ պոմպն աշխատում է անխափան:

- Վարդենիսի կեղտաջրերի մաքրման կայանում մանր ճաղավանդակի քերիչ սանրը տեղից խախտվել էր, որի պատճառով մեծ քանակությամբ աղը էր հավաքվել ճաղավանդակին: Արդյունքում քերիչ սանրը կարգաբերվեց և այժմ մաքրման կայանը աշխատում է բնականոն ընթացքով:

- Երևանի կեղտաջրերի մաքրման կայանում կատարվեցին բոլոր ամսականների, ընդունիչ խցի և ավազորսիչների մաքրման աշխատանքներ, որտեղ առաջացել էր մեծ քանակությամբ նստվածքներ: Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ: Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	63,706	10.8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	60,822	25.2
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	173,074	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	63,126	5.4
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	107,637	19.8
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	19,093	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	7,259	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	16,800	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	13,800	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	0	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

Աշխատանքների նկարագիրը	Քանակ
Պոմպի աշխատանքի զննում և կարգավորում	114
Էլեկտրական սարքերի զննում և կարգավորում	4
Փականի տեղադրում	1
Այց	1

1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Մարտ ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

«Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար մարտ ամսվա ընթացքում նորոգվել է թվով 6 մեքենայի շարժիչները մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:

Թվով 4 մեքենայի արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 6 մեքենա-մեխանիզմների վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղյուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի գսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամնանիփներ, առանցքակալներ, կիսատնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 5 մեքենայի

վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները,

հովացման ռադիատորների կափարիչները,

խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Փոխարինվել են թվով

46 մեքենա-մեխանիզմի

շարժիչի, փոխանցման

տուփի, հիդրոհամակարգի

յուղեր, արգելակման հեղուկ

և քսայուղեր:

Թվով 32 անվադող

նորոգվել է, փոխարինվել և

հավասարակշռվել է:

Թվով 15 մեքենայի մարտկոց

փոխարինվել է նորերով:

Թվով 8 մեքենա-մեխանիզմի

համար նորոգվել է և

փոխարինվել են բարձր

ճնշման ռետինե խողովակներ:

Վերանորոգվել են թվով 7 մեքենայի հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամուխ լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ:

Թվով 5 մեքենայի մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Թվով 2 մեքենայի վառելիքի համակարգերը նորոգվել են, փոխարինվել են բարձր ճնշման մղիչներ, բոցամուղեր, կայծամուներ:

Թվով 5 մեքենայի վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 6 մեքենայի վրա իրականացվել են գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Նորոգվել է թվով 7 մեքենայի փոխանցման տուփերը, փոխարինվել են ատամնանիփները, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.04.2022թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 574,583 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2022թ. մարտ ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	669,816	548,828	81,9
	Իրավաբանական անձ	30,418	25,755	84,7

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	733,706	567,214	77,3
	Իրավաբանական անձ	35,809	25,130	70,2

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայքեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ (Հայաստանի էլեկտրական ցանցեր և այլն): Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 934 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) զուգահեռ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցլության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Մարտ ամսվա ընթացքում ստուգաչափվել է 3060 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Մարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 02.2022
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	1277	1377	214	2868
	Իրավաբանական անձ	59	121	12	192
	Ընդամենը	1336	1499	226	3060

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ մարտ ամսին փոխարինված 3060 ջրաչափերի մոտ 56%-ը (կամ 1724 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 161,970 մ³ հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2022թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ:

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Մարտ ամսին նախորդ ամսվա ձևավորված հասույթի համեմատ գանձումը կազմել է 2,031 մլն դրամ (99 %): Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում նախկինում կիրառվում էին բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում,

ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Սակայն, հաշվի առնելով աշխարհում՝ այդ թվում Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը, ընկերությունը մարտ ամսին գերծ է մնացել հիշեցումների և ծանուցումների մինչ այժմ կրառվող մեթոդներից (բացառությամբ SMS-հաղորդագրությունները):

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում էին պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, վերը նշված հանգամանքներից ելնելով, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Մարտ ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 534 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 53.7 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ խոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը շարունակական		Բավարարված		Մերժված		2017-2022թ.թ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
10777	1213381515	7047	686250708	158	20991281	3627	517713729	4100	421707631

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 65 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 1 %-ը մերժված:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.04.2022թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում նոյեմբեր ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	8,688	2,059
Բնակիչ-բաժանորդներ	6,377	1,362
Իրավաբանական անձեր	2,311	697

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՏՏ սպասարկման տարածքում շուրջ 316.6 մլն. ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը:

2022 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ



2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.04.2022թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	701,240	565,673	80.67	34,706	25,121	72.38
	Առանց ջրաչափի	32,466	1,541	4.75	1,103	9	0.82

Տվյալների բազայում 01.04.2022թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Առևտրային	872,853	401,490	46.00	38,523	11,205	29.09

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 4593 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 698 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2378	1950	81.9
գ.Պոռշյան	1611	1085	66.5
ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.	5913	1864	32.4

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Չնայած երկրում տիրող համաճարագային իրավիճակին, ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Միսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 10839, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 10448, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 1607, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2295, Միսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1491, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 2372 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 4200 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Առևտրային տնօրինության տեղամասերի աշխատակիցների ամենօրյա աշխատանքի մաս են կազմում ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրություններն «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն կատարած անձիք սահմանված կարգով ծանուցվում են, նրանց են ներկայացվում վերահաշվարկվող, վճարման ենթակա գումարների չափերը, իսկ տվյալ հասցեները փոխանցվում են տարածաշրջանի շահագործման տնօրինությանը՝ ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	380	148,514	27,555,078

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, հիմնականում իրականացվում էր Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




3.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ




Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված Երևան քաղաքի մարտ ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը կազմել է՝ 97.1%, ինչը 0.8% ավել է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:


Ջրամատակարարման շարունակականություն Երևան



Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի բաժնի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 51 ՃԿՓ-ներ: Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը:




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արգավան, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2022թ-ի մարտ ամսին, 2021 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 130 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսն ավելացել է 110 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկներում:



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 13 574 ԿՎտ.ժ (2,62 %), այն դեպքում երբ նորակառույց շենքերի յոթ պամպակայան ավելացել է «Վեռլիա Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռում՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ: Այդ 7 պամպակայանների էլ. էներգիայի ծախսը միայն կազմում է 4349 կՎտ.ժ: Իսկ առանց այս պամպակայանների էլ. էներգիայի ծախսի, այն կնվազեր 17923 ԿՎտ.ժ:

Երևան քաղաքի բակային պոմպեր (առանց խարբերողի պոմպակայանի)








Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով պոմպերի և այլ սպառիչների շահագործման ընթացքում ծագած խնդիրների հայտնաբերման նպատակով:

Ուսումնասիրված հասցեներ


Հաշվետու ժամանակահատվածում 94 հասցեներում կատարվել են էլ. հաշվիչի ցուցմունքների գույքագրման և պոմպակայանի գնման աշխատանքներ: 11 պոմպակայաններում կատարվել են ճնշման ռեգուլյորների և պոմպի աշխատանքի կարգաբերում: 1 հասցեում հայտնաբերվել է հավելագրում 11160 կՎտ/ժ, կազմվել է արձանագրություն: Արարատի ՕԿՁ-ի էլ. հաշվիչը փոխարինվել է նորով: Ադոնց 8 շենքի պոմպակայանի համար «ՀԷՅ» ՓԲԸ-ից ձեռք է բերվել տեխ. պայման:

Պոմպակայանների հոսանքի ծախսի գրաֆիկների ուսումնասիրության արդյունքում 7 պոմպակայանում հայտնաբերված խնդիրները վերացվել են:



● Գյումրի քաղաքում էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 8050 կՎտ.ժամ 22.6%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Շիրակ



Պոմպակայանների ուսումնասիրություն

Թվով 30 խոշոր պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 21 պոմպակայաններում վերացվել են հայտնաբերված թերությունները:


Թվով 405 բակային պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 302 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները: Ինչպես նաև իրականացվել են վարչական շենքերի, էլ. մագնիսական հոսքաչափերի և ՕԿՋ-ի էլ. սնուցման մալուխների և լուսատույթային վերականգնման աշխատանքներ:

Ինվերտորների տեղադրում

Հաշվետու ամսում հինգ հասցեներում նախկին պոմպերի ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերը փոխարինվել են ինվերտորային համակարգով.

- Գ. Նժդեհի 9 (She-49)
- Հալաբյան 9/1 (Ma-1)
- Մեքաստիա 141/1 (Sh-4)
- Նժդեհի 45 (She-39)
- Արշակունյաց 42/3 (She-99)

Տեղադրված գումարային 106 ինվերտորային պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, նվազել է -27,277 կՎտ.ժ կամ 17.21%:




Խոշոր պոմպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ

● Հաշվետու ժամանակահատվածում 20 խոշոր պոմպակայաններում էլ.մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները հայտնաբերվել և վերացվել:


2022 թվականի մարտ ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը ավելացել է 1 461 222 ԿՎտ/ժամ (18,16%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա




Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 34 603 ԿՎտ.ժ/ ամիս կամ 1,88%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 162 165 ԿՎտ.ժ կամ 4,23 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

«Վեռլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացնում են մարտ ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
ԱՏՀ-ում ստեղծված բազաների մախավորում Լոռու և Կոտայքի մարզերի մասով	մարզեր	2
Ստեփանավան քաղաքի ջրամատակարարման բաշխիչ ցանցի տվյալների փոփոխում	քաղաք	1
Կատարողական գծագրերի (ՊԿԱԾ) առկա և բացակա տվյալների հավաքագրում	հավաքագրում	1
Կատարողական գծագրերի (ՊԿԱԾ) անցկացում ԱՏ համակարգ	ծրագիր	1
ԶՄԿ և ԿՄԿ տվյալների ճշգրտում և մուտքագրում	մուտքագրում	1
Արարատի և Արմավիրի մարզի գյուղերի տվյալների բազաների ստեղծում	գյուղ	8
Երևան քաղաքի տարբեր համայնքների ջրագծերի թարմացումներ	քաղաք	1
Տեխնիկական պայմանների թվայնացում	հատ	114
Հիդրավիկ մոդելավորում Մարտիասն և Հարթաշեն գյուղերի համար՝ ԱՏՀ-ում լրացված և մշակված բազաների հիման	գյուղ	2
Արմավիր, Արագածոտն, Կոտայքի մարզերի ՕԿՁ-ների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում, լրացում և ճշգրտված տվյալների մուտքագրում	մարզ	2
“VEOLIA JUR”-ի կողմից ստեղծվել է սպասարկվող համայնքների և համայնքները սպասարկող տեղամասերի/ենթատեղամասերի տեղադիրքերի քարտեզ	քարտեզ	1
Ցայտադրյալների տվյալների մուտքագրում ԱՏՀ-ում և բազայի լրացում	ցայտադրյալ	823
Գոտիավորման բաժնի համար գծագրվել են ջրամատակարարման սխեմաներ	սխեմա	192
Քանաքեռավան գյուղի կոյուղագծերի թվայնացում	կմ	9,92
Մարզային կոյուղու երկարությունը փոփոխված տարբերակով	կմ	1495,3
Երևան քաղաքի կոյուղու ընդհանուր երկարությունը	կմ	1762,7
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական նոր կետերի ավելացում	կետ	453
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական նոր կետերի ավելացում	կետ	198

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք հաշվետու ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը:

Գառնի-Երևան ջրատար

Ջրատարի հերթական շրջայցի ժամանակ Գառնու ձորում հայտնաբերվել է վթարված միացում, որը վերացվել է «Կենտրոն» ՇՏ-ի ուժերով:



Ապարան-Երևան ջրատար

Ջրատարի վրա Պոռշյան գյուղում հայտնաբերվել է վթարված միացում, որի մասին տեղյակ է պահվել «Մաշտոց» ՇՏ-ի աշխատակիցների:

Արզական-Չովունի ջրատար

Ջրատարի վրա Հալաբյան փողոցի հատվածում կազմակերպվել է կանգառ՝ ջրատարի շրջանցման նպատակով: Այդ ընթացքում նաև փոխարինվել է օդահեռ փականը և նույն դիտահորի մեջ խցափակվել է վթարված միացում: Նույն կանգառի ընթացքում «Նորոբացի» չոր խցում ապամոնտաժվել է D=800մմ չօգտագործվող փական և դրա տեղում ջրատարը խցափակվել է:





Ղազարավանի կապտածներում

Կապտածներում ուսումնասիրությունների ընթացքում պարզվել է, որ կապտածներից մեկի ջուրը մուտք չի գործում հավաքման խուց: Կապտածի միջից հանել են մեծ քանակությամբ ծառի արմատներ:

Որոնումներից հետո հայտնաբերվել է ծածկված դիտահոր, որի մեջ այդ կապտածից եկող խողովակը խցափակվել էր արմատներով: Դիտահորը մաքրվել է արմատներից տրակտորի օգնությամբ, և ջրաքանակն ավելացել է ≈ 7 լ/վ-ով:



Գոտիավորման աշխատանքներ

Քաղաք Գյումրի

«Շիրակ» տեղամասի աշխատակիցների հետ միասին կատարված ուսումնասիրությունների արդյունքում Գյումրի քաղաքի Անի թաղամասի 11-րդ փողոցի 4-րդ շենքը սնուցող $D=50$ մմ ջրագծի վրա հայտնաբերվել է գաղտնի վթար: Ջրագծի քայքայված և շահագործման համար ոչ պիտանի լինելու պատճառով այն ներանցման միջոցով փոխարինվել է նոր $D=32$ մմ, $L=10$ մ ՊԷ խողովակով՝ ապահովելով կայուն ջրամատակարարում: Տնտեսվել է մոտ $Q = 1-1,5$ լ/վ ջրաքանակ:



«Շիրակ» տեղամասի աշխատակիցների հետ միասին ուսումնասիրվել է կատարվել նաև Գյումրի քաղաքի Ախուրյանի խճուղիի 2ա շենքի դիմաց տեղի ունեցած վթարը: Փորման աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է $D=250$ մմ տրամագծով հին ջրամատակարարման հանգույց 3 փականով, որոնցից նախկինում սնվող ջրագծերը խցափակված էին: Խողովակափնտրիչ սարքով հայտնաբերվել է տվյալ ջրագծերի միացման տեղը, որը սնուցվում էր Արցախի $D=250$ մմ ջրագծից: Խցափակման եղանակով շահագործումից հանվել է $D=250$ մմ, $L=108$ մ պողպատե ջրագիծ և տնտեսվել է մոտ $Q = 1,5-2$ լ/վ ջրաքանակ:



Քաղաք Ծաղկաձոր

● Ծաղկաձոր քաղաքում վթարավորոնողական աշխատանքներ իրականացնելու ընթացքում հայտնաբերվել է վթար Սարալանջի փողոցով անցնող $D = 50$ մմ ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q = 2$ լ/վ ջրաքանակ:



Գյուղ Գագարինական

● Գագարինական գյուղում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար Երիտասարդական 2 հասցեի մոտով անցնող $D = 32$ մմ ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q = 0,5$ լ/վ ջրաքանակ:

Քաղաք Հրազդան

● Հրազդան քաղաքում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Բաֆֆի փողոցով անցնող $D = 25$ մմ ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q = 1$ լ/վ ջրաքանակ:



Վարսեր գյուղ

● Վարսեր գյուղում կատարված ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերվել է վթար 11-րդ փողոցով անցնող $D = 100$ մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q = 0,5$ լ/վ ջրաքանակ:

Քաղաք Արովյան


● Արովյան քաղաքի 4-րդ միկրոշրջանում կատարված ուսումնասիրությունների արդյունքում 65 շենքի $D = 80$ մմ պողպատե մուտքագծի վրա հայտնաբերվել է վթար: Կատարվել է վթարված ջրագծի փոխարինում ներարկման եղանակով $D = 63$ մմ, $L = 40$ մ ՊԷ ջրագծով, ինչի արդյունքում տնտեսվել է $Q = 4$ լ/վ ջրաքանակ:



Քաղաք Երևան

● Կենտրոն տեղամասի աշխատակիցների հետ կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Տպագրիչների փողոցով անցնող $D = 150$ մմ թուջե ջրագծից միացված, անհայտ ուղղությամբ գնացող $D = 50$ մմ թուջե ջրագծի վրա: Կտրվել է խցափակվել է նշված ջրագիծը արդյունքում տնտեսելով $Q = 5$ լ/վ ջրաքանակ:

● «Մաշտոց» տեղամասի աշխատակիցների հետ միասին իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հատնաբերվել է գաղտնի վթար Լուկաշին-Մարտիրոսյան փողոցների խաչմերուկով անցնող $D=50$ մ պողպատե ջրագծի վրա: Միացման կետից խցափակվեց նշված վթարված ջրագիծը: Արդյունքում տնտեսվել է $Q = 3$ լ/վ ջրաքանակ:



● «Շենգավիթ» տեղամասի աշխատակիցների հետ կատարած վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Չեխով 12ա շենքի մուտքագծի վրա: Վթարը վերացնելու արդյունքում տնտեսվել է $Q = 5$ լ/վ ջրաքանակ:

● «Զեյթուն» տեղամասի աշխատակիցների հետ կատարված լայնածավալ վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել են բազմաթիվ վթարներ Միուբի ջրամբարից դեպի Քանաքեռ Վերին ջրամբարը միացնող ջրատարից միացված $D=100$ մ և $D=50$ մ տրամագծով ջրագծերի վրա: Վթարները վերացնելուց հետո տնտեսվել է $Q=4$ լ/վ ջրաքանակ:



● «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների հետ կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել են 2 գաղտնի վթարներ Փարպեցի 11ա շենքի բակում, Պուշկին 60 պոմպակայանի մոտ ջրագծի վրա: Նշված վթարները վերացնելուց հետո տնտեսվել է $Q=4$ լ/վ ջրաքանակ և էլեկտրաէներգիա:

3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Քաղաք Երևան

- Ավան Բաբաջանյան 3/1 հասցեում վերանորոգվել է շարքից դուրս եկած 17/7 լ/ժ արտադրողականությամբ դրոպվորման պոմպը, պահեստավորման նպատակով:

- Ավան Բաբաջանյան 3/1 հասցեում վերանորոգվել է նաև հեղուկ քլորի 1կգ/ժ արտադրողականությամբ դրոատորը, պահեստավորման նպատակով:



- Ավան Բաբաջանյան 3/1 հասցեում վերանորոգվել են հեղուկ քլորի համակարգի 4կգ/ժ արտադրողականությամբ երկու վակուում կարգավորիչներ՝ պահեստավորման նպատակով:

Քաղաք Սևան

- Լճաշեն քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով խափանված պոմպը փոխարինվել է նորով:



Քաղաք Գյումրի

- Ղազանչի քլորակայանում հիպոքլորիդի հաբի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով հիպոքլորիդի հաբի համակարգի խափանված դրոպվորման պոմպը 17/7 լ/ժ արտադրողականությամբ, փոխարինվել է նորով:

Քաղաք Չարենցավան


- Ֆանտան քլորակայանում սարքավորման անխափան աշխատանքն ապահովելու նպատակով վերանորոգվել են քլորակայանի քլորագծերը:



3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

- Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 30586 զանգ:
- Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 10527 զանգ, որից Երևան քաղաքինը եղել է 8539 զանգ (81.1%), իսկ մարզերի ցուցանիշը՝ 1988 զանգ (18.9%):
- Շահագործման վերաբերյալ ստացվել է 20059 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 14094 զանգ (70.3%), իսկ մարզերինը՝ 5965 զանգ (29.7%):

● 2021թ. մարտի համեմատ՝ 2022թ. մարտ ամսին 12.29 %-ով նվազել է առևտրային զանգերի քանակը, իսկ շահագործման զանգերի քանակը նվազել է 15.50 %-ով: 2021թ. մարտի համեմատ՝ 2022թ. մարտի ամսին 119%-ով ավելացել է հայտարարությունների լուսն ավտոմատ ծառայության միջոցով, 36%-ով ավելացել է ֆիքսված զանգերի քանակը, իսկ 6 %-ով նվազել է 5 թուփեից ավել զանգերի քանակը:



185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեգիր

	Ստորաբաժանում	2021 մարտ	2022 մարտ	
Առևտրային	Ընդամենը	12002	10527	-12.29%
	Երևան	9573	8539	-10.80%
	Մարզեր	2429	1988	-18.16%
Շահագործում	Շահագործում	23738	20059	-15.50%
	Հարավ	10893	7932	-27.18%
	Շենգավիթ	2276	1798	-21.00%
	Կենտրոն	3557	2169	-39.02%
	Հյուսիս/Ավան Նոր Նորք/	1255	748	-40.40%
	Էրեբունի	1774	750	-57.72%
	Պոմպեր	485	476	-1.86%
	Մարզեր	1546	1991	28.78%
	այդ թվում կոյուղու վթար	65	27	-58.46%
	այդ թվում դիտահորի խցանում	3132	2278	-27.27%
	Հյուսիս	12845	12127	-5.58%
	Արաբկիր	2367	2145	-9.38%
	Քանաքեռ-Զեյթուն	1274	945	-25.82%
	Մաշտոց	2390	2585	8.16%
	Շահումյան	1725	1697	-1.62%
	Պոմպեր	918	781	-14.92%
	Մարզեր	4171	3974	-4.72%
	այդ թվում կոյուղու վթար	63	64	1.59%
	այդ թվում դիտահորի խցանում	4233	4175	-1.37%
		Ընդամենը	35740	30586

ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ




Ձևառատ մարտը, ինչպիսին, ըստ մասնագետների, չէր եղել վերջին 40 տարում, նորից առաջ մղեց համակարգի բնականոն գործունեության ապահովման ուղղությամբ ՎեոլիաԹիմի գործադրած ջանքերը հանրությանը ներկայացնելու անհրաժեշտությունը:

Չյան առատ տեղումների և ուժեղ քամիների պատճառով այս ընթացքում շատ ինժեներական կառույցներում առաջացան տեխնիկական խնդիրներ, որոնք սեղմ ժամկետներում լուծվեցին մասնագետների կողմից: Հանրային կապերի բաժինը / ՇԿԲ/ մասնավորապես անդրադարձավ սպասարկող անձնակազմերի կողմից «Արգնի» ջրաղբյուրում քարաթափման հետևանքները վերացնելուն, «Նովոսելցովո» աղբյուրի սանիտարական գոտին ձյան կուտակումներից մաքրելուն, «Լոռի» ՋՄԿ-ի սառցակալած գետընդունիչի աշխատանքը կարգավորելուն, «Ապարան» ջրաղբյուրի պոմպակայանում էլեկտրահաղորդման գծերի վթարը վերացնելուն և պոմպակայանը վերաշահագործելուն, «Մանթաշ» քլորակայանի էլեկտրասնուցումը վերականգնելուն:



Այդ մասին հրապարակումները հանրային լայն արձագանք ստացան, որին նպաստեց լուսանկարների առկայությունը սառցակալումներով, պոկված էլեկտրահաղորդման գծերով, ձյունառատ լեռներով, որոնց միջով, հաճախ ոտքով, համակարգի աշխատակիցները ստիպված էին ճանապարհի բացել դեպի կիլոմետրեր հեռու գտնվող աղբյուրներ՝ իրենց հետ տանելով գործիքներն ու ծախսանյութերը: Այստեղից էլ սպառողների ակտիվ դրական արձագանքը [facebook.com/veolia.armenia](https://www.facebook.com/veolia.armenia) էջում հրապարակումներին ու, համապատասխանաբար, բողոքների նվազումը:



Սակայն նորաբաց գարունն այնուամենայնիվ ակտիվացրեց նաև ՊԿԱԾ 2022-ով և ընկերության շահագործման տեղամասերի սեփական ուժերով տարվող ջրաշինարարությունը: Առավել խոշոր մի քանի ծրագրեր լուսաբանվեցին ՇԿԲ-ի կողմից, այդ թվում նոր ջրագծերի կառուցումը Երևանի Չերնիշևսկու փողոցում և Էջմիածնի Անդրանիկ թաղամասում, ջրագծերի, մուտքագծերի և կոյուղագծերի փոխարինումը Կապանի Շահումյան թաղամասում, պոլիէթիլենե նոր ջրագծի կառուցումը Ներքին Չարբախ թաղամասում:


Հանրությանը շարունակաբար ներկայացվեցին նաև ընթացիկ վթարային աշխատանքները, որոնցից ամենակարևորը «Արգական-Երևան» մայրուղային ջրատարի կանգառն էր, որի ժամանակ, այդ թվում գիշերը, միաժամանակ իրականացվեց 3 անուն աշխատանք ու ապահովվեց խողովակաշարի հետագա կանոնավոր ու անվտանգ շահագործումը:

Ընդ որում, դրանք լուսաբանելիս հնարավորության դեպքում ընդգծվել է առաջացող խնդիրները նորովի լուծելու ընկերության ձգտումը, համակարգում ժամանակակից տեխնիկայի ու տեխնոլոգիաների ներդրման և կառավարման առումով որակական փոփոխությունների միջոցով: Այսպես, Երևանում Պուշկինի 60 և Մարյան 25 հասցեներում վթարները հայտնաբերվել են գիշերը, հարաբերական լռության և ջրի սպառման նվազման պայմաններում, որոնք նպաստում են ուլտրաձայնային սարքերի միջոցով թաքնված վթարների ու հոսակորստի փնտրտուքին: Իսկ Արմավիրի Մայիսյան գյուղի Ծառաշեն թաղամասի ջրամատակարարումը վերականգնվել է ռոտոման ջրանցքի տակով անցնող վթարված մետաղական խողովակի մեջ պոլիէթիլենային խողովակի ներանցման մեթոդով: Իջևանի «Գմբեթ» և «Քարքարուտ» ՕԿՁ-ները ներսից պատվել են պոլիէթիլենային թաղանթով, որը նոր խոսք է վթարված և ջրի արտահոսք ունեցող ջրամբարների վերանորոգման գործում:

Մարտի 22-ին Ջրի համաշխարհային օրվա կապակցությամբ Վեոլիայի ներկայացուցիչները հյուրընկալվեցին ՀՀ ԳԱԱ-ի Երկրաբանության թանգարանում և աշխատաժողովի մասնակիցներին ներկայացրեցին Երևանը սնող ջրի աղբյուրները: Նույն օրը [facebook.com/veolia.armenia](https://www.facebook.com/veolia.armenia) էջում, այս միջոցառումից բացի, հրապարակվեց հաղորդագրություն խմելու ջրի կարևորության մասին, որպես կյանքի աղբյուրի:

Չմոռացվեց նաև Կանանց միջազգային օրը, որի առթիվ Մարտի 8-ին տնօրինությունն իր շնորհավորանքները հղեց սպառողներին:

Ամսվա վերջին, Վեոլիայի կարևորությունը հանրապետության տնտեսական կյանքում ընդգծելու նպատակով, հրապարակվեց ինֆոգրաֆիկա այն մասին, որ ըստ ՀՀ ՊԵԿ-ի տվյալների՝ 2021թ.-ին ընկերությունը հանդիսացել



Է հանրապետության 36-րդ խոշոր հարկատուն, պետական բյուջե վճարված 4,8 մլրդ դրամ գումարով:

Պարտադիր լուսաբանման ենթակա աշխատանքներից վերջինը 350 կմ ընդհանուր երկարությամբ անձրևաջրերի հեռացման համակարգի հերթական՝ զարնանային սպասարկման աշխատանքների մեկնարկի մասին է, երբ խողովակաշարերն ու դիտահորերը մաքրվում են ձմռանը կուտակված աղբից, իսկ ճաղավանդակները վերանորոգվում են կամ փոխարինվում:

Հաշվետու ամսին իրականացվել է մոտ 30 հրապարակում, ընդգրկելով ընկերության գործունեության գրեթե բոլոր ուղղությունները, չհաշված

խոշոր ջրանջատումների, մրցույթների ու թափուր աշխատատեղերի մասին հայտարարությունները:

Հրապարակումների մի մասը նաև առաքվել է հանրապետության առաջատար մոտ 60 լրատվամիջոցների: Իսկ երբեմն էլ դրանք, facebook.com/veolia.armenia-ից բացի, տեղադրվել են սպառողների հետ Օպերատորի կապի նաև մյուս digital միջոցներում. Veolia.am պաշտոնական կայքում, twitter.com/Veolia_AM և youtube Veolia Jur էջերում:



*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*




5.1. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

● Բաժինը, ղեկավարվելով ընկերության գլխավոր տնօրենի 24 հունվարի 2022թ-ի N 02 Լ հրամանի և հրամանով հաստատված կարգի պահանջներով, Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի Կառավարման (ԲՌԿ) ստանդարտի պահանջներով՝ հաշվետու ամսում մշակեց «Գազաէլեկտրաէներգետիկայի աշխատանքներ» բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի վերաբերյալ դասընթացի պրեզենտացիայի նյութը:


● Հաշվետու ամսում լրամշակվեց «Էլեկտրագազաէներգետիկայի» մասնագիտական որակավորման դասընթացի պրեզենտացիայի նյութը և կազմվեց դասընթացի ավարտին մասնակիցների կողմից լրացվելիք գիտելիքների ստուգման հարցաշարը:

5.2. ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐ/ՄԵՄԻՆԱՐՆԵՐ

● Բաժինը, ղեկավարվելով ընկերության գլխավոր տնօրենի 24 հունվարի 2022թ-ի N 02 Լ հրամանի և հրամանով հաստատված կարգի պահանջներով, ելնելով ադմինիստրատիվ կառավարման որակի բարելավման շարունակականության ապահովման անհրաժեշտությունից, ինչպես նաև ընկերության կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողների կողմից ժամանակի կառավարման հմտությունների լավացման և իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացման պահանջներից՝ Ընկերության Գործառնական տնօրինության Ջրի որակի վարչության թվով 29 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց «Ժամանակի կառավարման գործիքակազմ» թեմայով հեռավար դասընթացը:



2021-2022թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին (ԴԱՍԸՆԹԱՅ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ




5.3. ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայքեր Ընկերության թվով 1 քլորակայանում, 1 պոմպակայանում և 49 վարչական շենքում: Ստուգայքերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

● ՈԱԱ Բաժնի կողմից ուսումնասիրվել են Ընկերության թվով 11 ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով զմանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ:

2022 թ. իրականացված անվտանգության ստուգայքների քանակներն ըստ օբյեկտների



5.4. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԱՐ ԼԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ, ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՏԻՄԵՐԻ ՀԵՏ

● Սույն թվականի մարտի 1-ին «Հարավ» շահագործման տնօրինության «Կենտրոն» շահագործման տեղամասը, ՈԱԱ բաժնի համակարգմամբ, մասնակցեց Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում անցկացված ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժությանը՝ «Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը հակառակորդի հարձակման դեպքում» թեմայով, ինչպես նաև տեղում խաղարկվող միջանկյալների հիման վրա իրականացվեց գործնական վարժանք՝ հնարավոր արտակարգ իրավիճակներում արագ արձագանքման և վթարավերականգնողական աշխատանքների իրականացման ուղղությամբ:





● Սույն թվականի մարտի 21-ին, 22-ին, 23-ին և 24-ին «Հյուսիս» շահագործման տնօրինության «Ալավերդի», «Բերդ», «Շիրակ» շահագործման տեղամասերը, ՈԱԱ բաժնի համակարգմամբ՝ մասնակցեցին Լոռու մարզի Ալավերդի, Թումանյան, Տավուշի մարզի Բերդ և Շիրակի մարզի Ամասիա խոշորացված համայնքներում «Ուժեղ երկրաշարժի դեպքում խոշորացված համայնքի բնակչության պաշտպանության կազմակերպումը և իրականացումը» թեմայով Շտաբային ուսուճնավարություններին, որի ընթացքում խաղարկային միջանկյալ միջոցառումների հիման վրա պատրաստվեցին զեկույցներ և ներկայացվեցին ուսուճնավարության դեկավարներին:



5.5 ՔԼՈՐԻ ՏՈՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՆՇԱՓՈՐՁԱՐԿՄԱՆ, ՎԿԱՅԱԳՐՄԱՆ ԵՎ ՆԵՐԿՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● Հաշվետու ամսում Բաժինը, Տեխնիկական տնօրինության Ք և ԽՁՄԿ Ծառայության հետ համատեղ, Հայաստանի հանրապետությունում գործող հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում կազմակերպեց և իրականացրեց Ընկերության թվով 28 կոնտեյների և 33 բալոնի ճնշափորձարկման, վկայագրման և ներկման աշխատանքները:



«ՎԵՈՒԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Սարգսյանի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Արբիլյան 66ա
E-mail: info@vjur.am